



**ՓՈՒԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ**

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՎԱՋԳԷՆ Ա.-ի ԽՕՍԸԸ  
ՈՒՂՂՈՒԱԾ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՅՈՅՑԻՑ  
ՅՈՒԼԻՍ 1992

„Տէր, Աստուած քարեզու՞ ու ողորմած, մի տանիր զմեզ ի փորձուքիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ:“

Հարագատ զաւակներ Հայկազեան մեր ազգի,

Զգում եմ, որ հերոսական Արցախում ստեղծուած առաւել ողբերգական այս օրերին, Դուք, ի Հայաստան և ի սփիւռոս աշխարհի, սպասում էք մի միջ-թարական խօսք լսել Սուրբ էջմիածնից:

Ահաւասիկ, ես պատրաստ եմ այդ պարտքը կատարելու, սակայն ինձ հարց եմ տալիս՝ ինչպէ՞ս միջթարեմ ես ձեզ, երբ ինքս կարիք ունեմ միջթարուելու, քանզի դժուար է մեղքել ձանր մշուշը, որ իջել է մեր նորաստեղծ անկախ պետութեան կեանքի հորիզոնի վրայ, տեսնելու համար ուղիղ մանապարհը դէպի փրկուքիւն:

Հայ ժողովրդի դարաւոր վշտի երգիչ՝ Աւետիս Ահարոնեանը պիտի ասէր այսօր էլ՝ „Վերստին կանգնած Յնք մեր ժողովրդի ժանիքաւոր մակա-տագրի առաջ, մակատ առ մակատ,,:

Սակայն այս պահին, նախ իմ հոգևոր պարտականութիւնն եմ համարում իմ աղօթքը առաքել դէպի երկինք, Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում զոհուած ազատամարտիկների հոգիների համար, որոնք մի անգամ ևս փառաւորեցին մեր ազգի պատմութիւնը իրենց հեղած արեամբ, ազատութեան ու արդարութեան գոհասեղանի առաջ: Նրանք նախընտրեցին ազատ մեռնել, քան ստրուկ ապրել:

Իբրև քրիստոնեաներ, մենք բոլորս հաւատում ենք, որ նրանք՝ կեանքից կեանք գնացին՝ երկնքում արժանանալով փառաց պսակին:

Ես հոգեկան սարսուռով յիշում եմ Մայր Աթոռիս միաբան Վահան Դաւթեան արեղային, որ երկու տարի առաջ իր իսկ ցանկութեամբ հոգևոր ծառայութեան կոչուեց Հայաստանի սահմանամերձ մի շրջանում և ազատամար-տիկներին հոգեպէս միջթարելու առթիւ, ինքը ևս զոհուեց ու թաղուեց Ս. Գայիանէի վանքի միաբանական գերեզմանատան մէջ: Երբ հէզ Վահանի՝ ուղևորի պայթիւնից պատառ-պատառ եղած մարմինը յանձնուում էր հողին, նրա հայրը՝ պարթևահասակ քաջասիրտ մի հայ գիւղացի, քաջականչեց՝ „Գնա որդիս, գնա՛, էն տեղից շարունակիր քո պայքարը,,:

Մենք ողբում ենք մեր նահատակուած գաւակների կորուստը, քայց մեր հոգին վկայում է, որ նրանք կորած չեն և, այո՛, շարունակում են իրենց սրբազան պայքարը երկրի վրայ մարտնչող իրենց եղբայրների կողքին:

Ես չգիտեմ ե ըբ և ինչպէ՛ս կը վերջանայ Արցախեան հերոսամարտը, սակայն ինձ համար մի իրողութիւն ստոյգ է, որ յանուն ազատութեան գոհուած մեր ժողովրդի գաւակների հերոսական սխրանքը, աշխարհի պատմութեան ժայռի վրայ անջնջելի տառերով արձանագրուած պիտի մնայ, երկու հազար հինգ հարիւր տարի առաջ թերմուպէ՛նէսի հերոսների ծանոթ արձանագրութեան կողքին, Հելլադայում:

Լոյս և խունկ և օրհնութիւն նրանց բոլորի անմոռաց յիշատակին: Ինձ համար հոգեկան մխիթարութիւն է հաստատել, թէ այս օրերին, մեր Մայր եկեղեցու հոգևորականներից շատերը, Վահան քրեդայի անձնագոհութեան ոգով տոգորուած, իրենց հոգևոր հայրենասիրական պարտքն են կատարում թէ Արցախի բարձունքներում, թէ Հայաստանի սահմանամերձ վտանգուած շրջաններում և թէ երկրաշարժի աղէտեալ գօտում:

Վշտահար սրտով յիշենք նաև Արցախում ու այլ ահաբեկուած շրջաններում, այ ազգաբնակչութեան ծոցից հազարաւոր գոհուած ձեր եղբայրներին ու քոյրերին, ձերունիներին, կանանց ու երեխաներին, ու աղօթենք նրանց արդար հոգիների խաղաղութեան համար երկնային յաւերժութեան լոյսի աշխարհում:

Այսօր իմ խօսքը ուզում եմ ուղղել նաև Հայաստանի ու Արցախի մեր ողջ ժողովրդին, որ կեանքի ծանրածանր պայմաններում, նրանք հոգու անմահ տոկունութեամբ ու համբերատարութեամբ իրենց խաչն են տանում անտրտուն՝ Գողգոթայի մահապարտով հասնելու յոյսով յարութեան յաղթանակին:

Յարգանք և օրհնութիւն քեզ արիասիրտ հպարտ իմ ժողովուրդ: Ես ինձ մխիթարուած եմ զգում, նաև քարձր գնահատելով մեր Հանրապետութեան նախագահի, կառավարութեան, խորհրդարանի և քաղաքական կուսակցութիւնների ջանքերը, հաւատալով, որ այդպիսով առաւել կ'ամրապնդուեն հիմքերը մեր անկախ Հանրապետութեան և աշխարհով մէկ քարձր կը պահուի եռագոյն դրօշը ազատագրուած մեր հայրենիքի, խորհրդանիշը ազատն հայոց աշխարհի և մեր ազգային արժանապատուութեան:

Սիրելիներ մեր, ես հրաւիրում եմ ձեզ քաջութիւնը ունենալ, տեսնելու թէ վերջին ամիսներին մանաւանդ, ոչ միայն Արցախի մեր ժողովուրդը, այլ նաև մեր մայր երկիրը Հայաստան, կանգնած են վտանգներով յղի կացութիւնների առաջ: Մեր հայրենի երկրի աշխարհագրական դիրքը, մեր ազգի ապցեալ ողբերգութիւնների յիշողութիւնը, մեր սեփական ուժերի տարողութիւնը, այլ և այս անիրաւ աշխարհի անտարբերութիւնը, մեր ազգի արդար իրաւունքների նկատմամբ, որով յենք լսում վճռական մի խօսք՝ ոչ հիւսիսից, ոչ արևելքից և ոչ էլ արևմուտքից

ու շարունակուում է իշխող մնալ ոչ թէ օրէնքի ուժը, այլ ուժի օրէնքը, ասա քախտորոշ մտահոգիչ այս իրողութիւններն են, որոնք ինչպէս գիտէք, տնայէս քննարկման ու վերլուծման առարկան են հանդիսանում մեր Հանրապետութեան նախագահի, մեր խորհրդարանի ու մեր կառավարութեան, որոնք վստահ եմ, թէ ամէն հնարաւոր միջոցառումներով ու համերաշխ գործելակերպով կը յաջողեցնեն ապահովել մեր հայրենի ժողովրդի և արցախահայութեան անվտանգութիւնը:

Խօսելու է մեր Հանրապետութեան նախագահի, մեր կառավարութեան, մեր խորհրդարանի և կուսակցութիւնների երբեմն սխալ կամ շփոթ կողմնորոշումների մասին. քայց եկէք արդար լինենք խոստովանելու թէ՛ այն ներքին ու մանաւանդ արտաքին ծանր պայմաններում, որի մէջ գտնուում են՝ մեր Հանրապետութիւնը և արցախեան աշխարհը, երբ գրեթէ ամէն օր կանգնած են նրանք յարափոփոխ, անսախտեսելի ու իրարամերժ կացութիւնների և իրադարձութիւնների հորձանքի մէջ, դժուար է հաւատալ, թէ որևէ կառավարութիւն կամ խորհրդարան կը կարողանային՝ ամէն կողմից խոցուած մեր երկիրը դեկավարել առանց երբեմն սխալուելու: Սխալներ ելէ կատարուել են, նրանք կարող են սրբագրուել, զի միշտ կարելի է՝ այսօր աւելի ուղիղ մտածել քան երեկ:

Փոթորկուած այս պայմաններում հրամայական է, որ մեր պետական իշխանութիւնները, խորհրդարանը և քաղաքական կուսակցութիւնները՝ իրենց մտածելու և գործելու ուժերը կենտրոնացնէին հիմնական հարցերի լուծման վրայ, ինչպիսիք են՝ անվտանգ պահպանումն ու ամրապնդումը մեր անկախ պետականութեան, արդար մի լուծում գտնելը Արցախեան դատի ու դուրսբերումը մեր հայրենի ժողովրդի տնտեսական այս անտանելի իրավիճակից: Նոր ցնցումների՝ մեր ժողովուրդը այլևս չի կարող տոկալ:

Տագնապալի պահերին հին հոմէրոսի պատգամում էին՝ ,,Հայրենիքի փրկութիւնը գերագոյն օրէնքն է,,:

Աստուծոյ և ժողովրդի առաջ պատասխանատու՝ բոլոր մեր քաղաքական ու հասարակական գործիչներին, հայրական հրաւէր եմ կարդում դեկավարուել այս հրամայականով, միևնոյն ազգի հարազատ զաւակները լինելու գիտակցութեամբ, ներքնապէս առաւել միաւորուելով, առաւել գործակցելով, ժողովրդավարական օրինականութեան գործընթացով, առաջնորդուած մեր ազգային պետութեան գերագոյն շահերով:

Պատմութեան ընթացքում, գրեթէ բոլոր պետութիւնների, կայսրութիւնների կործանման պատճառները եղել են առաւելապէս ներքին պառակտում-

ները, ներքին հակամարտութիւններն ու կենտրոնախոյս մղումները: Յիշենք Յիսուսի հրեղէն խօսքերը՝ ,,Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր ոչ կացցէ,, (Մատթ. ԺԲ. 25), այսինքն՝ ,,ինքն իր մէջ բաժանուած ամէն թագաւորութիւն աւերոււմ է, և ինքն իր մէջ բաժանուած ամէն քաղաք կամ տուն կանգուն չի մնում,,:

Այս ճշմարտութիւնը անշուշտ չի հակադրուում ժողովրդավարական բազմակուսակցական պետութեան կառոյցի գործընթացին, այլ շեշտում է, որ այդ կառոյցը ինքն իր մէջ բաժանուելու դէպքում է աւերուում:

Ժողովրդավարական դեկլարման հիմքն իսկ է նաև Պօղոս առաքեալի, նոյն ոգով արտայայտած դատողութիւնը, թէ՛ ,,ինչպէս մի մարմնի մէջ բազմաթիւ անդամներ ունենք և իւրաքանչիւր անդամ նոյն գործը չի կատարում, սակայն բոլոր այդ անդամները մի մարմին են կազմում,, (Հռոմ. ԺԲ 4-5), և ,,եթէ մի մարմնի մի անդամը վշտանայ, կը վշտանան մարմնի բոլոր անդամները, իսկ եթէ մի անդամը փառաւորուի, նրա հետ կ'ուրախանան միւս անդամները,, (Ա. Կորնթ. ԺԲ. 26):

Սիրելիներ մեր, չէ՞ք նկատում թէ ինչքան այժմէական և ինչքան ուսանելի են հնչում այս սրբազան յորդորները մեզ բոլորիս համար, մեր իրավայոյց այս ժամանակներում:

Կամենում եմ վերստին յիշեցնել ձեզ մեր Եկեղեցու պատգամը՝ մշտապէս ուղղուած մեր ամբողջ ազգին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի. ,,Ազատութիւն յերկրայականս, միութիւն ի կարևորս, սէր յընդհանուրս,,:

Իմ խօսքը վերջացնելուց առաջ, ցանկանում եմ խոստովանել, որ իմ մտածումից բոլորովին հեռու է՝ միջամուկ լինել քաղաքական միջկուսակցական վէճերին, որոնք բնական երևոյթներ են ժողովրդավարական իրաւակարգ որդեգրած երկրներում, որովհետև համոզուած եմ, թէ վերջին խօսքը պատկանում է մեր ժողովրդին: Բոլոր պարագաներում, մեր ազգային Առաքելական Եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, վստահաբար նաև Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակոսական Աթոռով և Երուսաղէմի ու Կ. Պոլսի պատրիարքական Աթոռներով, կը մնայ միշտ մեր նորահրաշ անկախ Հանրապետութեան և ազատատենչ ժողովրդի կողքին, միշտ նրանց մխիթարող, միշտ նրանց գօրավիզ, միշտ նրանց իր օրհնութիւնը և Սուրբ Հոգու շնորհները բաշխող:

,,Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք՝ մխիթարեցաւ իւրեք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ,, (Բ. Կորնթ. ԺԲ. 11): Ամէն:

*Վաչագան Ա*

**Վաչագան Ա**  
Կրդկա Ամ

ԿԱՅՐԻՄԻԱՆՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒՆ